ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սոգիշսֆի 1

№ 5249-Ա « 23 » դեկտեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԽԱՌԸ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՆԵՐԴՐՈՂԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԲԱՑ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԵՐԿՓՈՒԼ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1043-1047-րդ հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 21-24-րդ հոդվածներով՝ Երևան քաղաքում խառը կենցաղային թափոնների վերամշակման գործարանի կառուցման և շահագործման ներդրողի ընտրության նպատակով՝

1. Հայտարարել Երևան քաղաքում խառը կենցաղային թափոնների վերամշակման գործարանի կառուցման և շահագործման ներդրողի ընտրության բաց հրապարակային երկփուլ մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ):
2. Ստեղծել Մրցույթի գնահատող հանձնաժողով և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:
3. Հաստատել՝

1) Մրցույթի կազմակերպման կանոնակարգը՝ համաձայն N 2 հավելվածի.

2) Մրցույթի գնահատման չափորոշիչները՝ համաձայն N 3 հավելվածի.

3) Մրցույթի մասնակցի մասնագիտական գործունեության՝ պայմանագրով նախատեսված գործունեությանը համապատասխանության մասին հայտարարության ձևը՝ համաձայն N 4 հավելվածի.

4) Մրցույթի մասնակցության դիմումի ձևը՝ համաձայն N 5 հավելվածի.

5) Մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին մասնակցի տվյալների համապատասխանության մասին հայտարարության ձևը՝ համաձայն N 6 հավելվածի.

6) Մրցույթի մասնակցության համար պահանջվող փաստաթղթերի ցանկը՝ համաձայն N 7 հավելվածի.

7) Մրցույթի տեխնիկական պահանջները՝ համաձայն N 8 հավելվածի.

8) Մրցույթի հաղթողի հետ կնքվող պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն N 9 հավելվածի:

4.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի վրա:

5.Որոշման կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետի տեղակալ Ս. Մադաթյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված N 1
Երևանի քաղաքապետի
2025թ. դեկտեմբերի 23-ի
հ. 5249 -Ա որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԽԱՌԸ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՆԵՐԴՐՈՂԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԲԱՑ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԵՐԿՓՈՒԼ ՄՐՑՈՒՅԹԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

	Անուն, Ազգանուն	**Պաշտոնը**
1.	Տիգրան Ավինյան	Երևանի քաղաքապետ (հանձնաժողովի նախագահ)
2.	Լևոն Հովհաննիսյան	Երևանի քաղաքապետի տեղակալ
3.	Սարգիս Մադաթյան	Երևանի քաղաքապետի տեղակալ
4.	Կամո Արեյան	Երևանի քաղաքապետի խորհրդական
5.	Սոնա Թևանյան	Երևանի քաղաքապետի խորհրդական
6.	Սիրարփի Հայկազյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար
7.	Քրիստինե Ավետիսյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ-գլխավոր ֆինանսիստ
8.	Վահան Խաչատրյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ
9.	Արմինե Ստեփանյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար
10.	Արսեն Կարոյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետ
11.	Անետա Բաբայան	«Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ-ի տնօրեն
12.	Սաշա Կատվալյան	«Երևանի սանիտարական մաքրում և աղբահանություն» ՓԲԸ տնօրեն
13.	Գորիկ Ավետիսյան	Հանձնաժողովի քարտուղար (առանց քվեարկության իրավունքի)

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Հավելված N 2
Երևանի քաղաքապետի
2025թ. դեկտեմբերի 23-ի
հ. 5249-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԽԱՌԸ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՆԵՐԴՐՈՂԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԲԱՑ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԵՐԿՓՈՒԼ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Երևան քաղաքում խառը կենցաղային թափոնների վերամշակման գործարանի կառուցման և շահագործման համար ներդրող ընտրելու նպատակով ստեղծվող հանձնաժողովը քննարկելու է բաց հրապարակային երկփուլ մրցույթին ներկայացված դիմումները և ընտրելու է հաղթող գործընկեր:
2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնակարգով և այլ իրավական ակտերով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

3. Հանձնաժողովի նպատակներն են՝

1) Մրցույթին ներկայացված դիմումների քննարկումը, գնահատումը, որոշման ընդունումը (պահպանելով մասնակիցների գաղտնիությունը), ծրարների բացումը և արդյունքների ամփոփումը հանձնաժողովի նիստում,

2) Մրցույթի արդյունքներն ամփոփելով՝ հաղթող ճանաչելու վերաբերյալ որոշման ընդունումը,

3) Մրցույթի արդյունքների հրապարակումը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով:

5. Հանձնաժողովը որոշում է նիստերի վայրը, օրը և ժամը, մրցույթի արդյունքների հրապարակման ժամկետը և այլն: Կանոնակարգը զետեղվում է Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում:
6. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում են հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելին: Հանձնաժողովը որոշումներն ընդունում է նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, ձայների հավասարության դեպքում՝ հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:
7. Հանձնաժողովը գործում է մրցույթի երկու փուլերի համար:
8. Մրցույթին ներկայացված դիմումների քննարկումը, գնահատումը, որոշման ընդունումը, ծրարների բացումը, ամփոփումը կատարվում է մրցութային հանձնաժողովի կողմից:
9. Առաջին փուլի արդյունքներով հանձնաժողովը որոշում է այն մասնակիցներին, որոնք բավարարում են Մրցույթի հայտարարությամբ նախատեսված պահանջներին և հավաքում են սույն որոշման N 3 հավելվածով նախատեսված առաջին փուլի գնահատման արդյունքների հիման վրա ոչ պակաս, քան 35 միավոր:
10. Առաջին փուլի արդյունքների ամփոփումից հետո սույն հավելվածի 9-րդ կետի պահանջներին բավարարող մասնակիցներին առաջարկվում է 30-օրյա ժամկետում ներկայացնել իրենց մրցութային առաջարկը՝ Մրցույթի երկրորդ փուլին մասնակցելու համար:
11. Մրցույթում հաղթող է համարվում սույն որոշման N 3 հավելվածով նախատեսված՝ Մրցույթի առաջին և երկրորդ փուլերի գնահատման արդյունքների հանրագումարով առավելագույն միավորներ հավաքած մասնակիցը:
12. Հանձնաժողովի նիստերը տեսաձայնագրվում և արձանագրվում են: Արձանագրությունը ստորագրվում է հանձնաժողովի նախագահի և նիստին մասնակցած հանձնաժողովի անդամների կողմից:
13. Հանձնաժողովի անդամները գնահատում են ներկայացված դիմումները՝ համապատասխանաբար ըստ փուլերի՝ լրացնելով առաջին և երկրորդ փուլերի համար սահմանված գնահատման թերթիկները:
14. Մասնակիցների դիմումները գնահատվում են համաձայն սույն որոշման N 3 հավելվածում նշված չափորոշիչների:

15. Մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչված մասնակցի հետ պայմանագիր է կնքվում մրցույթի արդյունքները ամփոփելուց հետո, 15 աշխատանքային օրվա ընթացքում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

16. Հանձնաժողովի նախագահը՝

1) վարում է հանձնաժողովի նիստերը.

2) ապահովում է հանձնաժողովի բնականոն գործունեությունը.

3) համակարգում է հանձնաժողովի աշխատանքը.

4) լրացնում է գնահատման թերթիկը.

5) ստորագրում է հանձնաժողովի նիստի արձանագրությունը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

17. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է հանձնաժողովի նիստին.

2) լրացնում է գնահատման թերթիկը.

3) ստորագրում է հանձնաժողովի նիստի արձանագրությունը.

4) կատարում է հանձնաժողովի նախագահի հանձնարարականները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

18. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) Հանձնաժողովի քարտուղարը հանդիսանում է հանձնաժողովի անդամ՝ առանց քվեարկության իրավունքի.

2) պատասխանատու է հանձնաժողովին տրամադրվելիք նյութերի նախապատրաստման համար.

3) ապահովում է մրցութային դիմումների գնահատման թերթիկների պատրաստումը.

4) մրցութային դիմումները տրամադրում է հանձնաժողովի անդամներին.

5) կազմում է հանձնաժողովի նիստի արձանագրությունը.

6) ապահովում է հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող փաստաթղթերի պահպանումը և սահմանված կարգով արխիվացման նպատակով այդ փաստաթղթերի հանձնումը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին.

7) բոլոր ստացած փաթեթներին տալիս է ծածկագրեր և համոզվում, որ պաստառի վրա առկա չեն ներկայացված աշխատանքը նույնականացնող նշումներ: Ընդ որում միևնույն փաթեթով ներկայացված պաստառի և տեղեկատվական թերթիկի ծածկագրերը պետք է համապատասխանեն միմյանց.

8) իրականացնում է մրցույթի վերաբերյալ հրապարակային ծանուցումը:

ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

19. Հանձնաժողովի քարտուղարը սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո www.yerevan.am և www.azdarar.am կայքերում, և այլ միջոցներով իրականացնում է մրցույթի վերաբերյալ հրապարակային ծանուցում, հետևյալ բովանդակությամբ.

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԽԱՌԸ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՆԵՐԴՐՈՂԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԲԱՑ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԵՐԿՓՈՒԼ ՄՐՑՈՒՅԹ

20. Մրցույթի կազմակերպիչ՝ Երևանի քաղաքապետարան
21. Մրցույթի Կազմակերպման վայրը՝ Քաղաք Երևան, Արգիշտի 1
22. Մրցույթի դիմումների ընդունման ժամանակահատվածը՝ դիմումներն ընդունվում են երկուշաբթիից ուրբաթ, ժամը 10:00-17:00
23. Մրցույթի առարկան և նպատակը. Երևան քաղաքի խառը կենցաղային թափոնների ամբողջական վերամշակման գործարանի կառուցում և շահագործում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված բնապահպանական նորմերին և միջազգային լավագույն փորձին համապատասխան:
24. Մրցույթի նպատակներն են՝

1) **Բնակչության առողջության բարելավումը**. Աղբատեղիների կրճատմամբ և հսկողությամբ նվազում է օդի, հողի և ջրի աղտոտվածությունը, ինչի արդյունքում նվազում են առողջական խնդիրները:

2) **Մաքուր և անվտանգ միջավայրի ապահովումը**. Վերամշակման արդյունքում նվազում է աղբի կուտակումը:

3) **Էներգետիկ և նյութական օգուտների ստացումը**. Վերամշակված աղբից ստացվող էներգիան կարող է նվազեցնել կոմունալ ծախսերը կամ լրացնել էլեկտրաէներգիայի և ջերմային էներգիայի ներքին պահանջարկի մի մասը:

4) **Էկոլոգիական և կլիմայական խնդիրների մեղմացումը**. Նվազեցնում է ջերմոցային գազերի արտանետումը:

5) **Աշխատատեղերի ստեղծումը**. Գործարանի կառուցումն ու շահագործումը ստեղծում են նոր աշխատատեղեր՝ տեխնիկական անձնակազմից մինչև վարչական ու սպասարկող աշխատուժ:

25. Մասնակցության պայմանները. մրցույթին ներկայացված դիմումների քննարկումը, գնահատումը, արդյունքների ամփոփումը և որոշման ընդունումը կատարվում է մրցույթի կազմակերպման հանձնաժողովի կանոնակարգի համաձայն:
26. Մրցույթին կարող են մասնակցել ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք, ներառյալ՝ կոնսորցիումի ձևով:
27. Մրցութային փաթեթներն ընդունվում են մրցույթի հրապարակման օրվանից 60 աշխատանքային օրվա ընթացքում:
28. Մրցութային փաթեթները ներկայացվում են մրցութային հանձնաժողովի քարտուղարին, որը ստորագրությամբ ընդունում է փաթեթը՝ մասնակցին տրամադրելով ստացական:
29. Մրցույթը բաց է և անցկացվում է երկու փուլով:
30. Մրցույթի դիմումների ընդունման ժամանակահատվածը՝ դիմումներն ընդունվում են երկուշաբթիից ուրբաթ, ժամը 10:00-17:00:
31. Փաթեթների ներկայացման վերջնաժամկետը. ոչ ուշ, քան մրցույթի հրապարակային ծանուցումից 60 աշխատանքային օր հետո /2026թ.՝ մարտի 27-ը, ժամը՝ 17.00/ հետևյալ հասցեով՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք, Արգիշտի 1, 511 սենյակ, հեռախոս 011514188 /
32. Փաթեթին ներկայացվող պահանջները. մրցութային փաթեթը բաղկացած է Երևանի քաղաքապետի 2025 թվականի -------- որոշման N 7 հավելվածով սահմանված փաստաթղթերից:
33. Դիմումներն ընդունվում են թղթային տարբերակով:
34. Դիմումների կազմման լեզուն հայերենն է:

35. Նամակի վերնագիր բաժնում պետք է նշվի՝ «**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԽԱՌԸ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ**», իսկ դիմումում՝ մասնակցի անվանումը (անունը), հեռախոսահամարը, Էլ.փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը:
36. Դիմումը պետք է ներառի մրցույթի տեխնիկական պահանջներին՝ պայմանագրով նախատեսված գործունեությանը համապատասխանության մասին Երևանի քաղաքապետի 2025 թվականի------- որոշման N 4 հավելվածով սահմանված տեղեկատվությունը և փաստաթղթերը:

37. Սահմանված կարգի պահանջներին ոչ համապատասխան ներկայացված դիմումները, ինչպես նաև՝ ներկայացնելու ժամկետը լրանալուց հետո ուղարկված դիմումները մերժվում են:

38. Դիմումների ուսումնասիրությունը մեկնարկում է դիմումների ներկայացման վերջնաժամկետից հետո, և մասնակիցներին դիմումների ընդունված լինել/չլինելու մասին ծանուցվում է վերջնաժամկետից հետո՝ հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

39. Մասնակիցը մինչև դիմում ներկայացնելու վերջնաժամկետի ավարտն իրավունք ունի փոփոխելու կամ հետ վերցնելու իր դիմումը:

40. Մասնակցի պահանջի դեպքում 3-օրյա ժամկետում կտրամադրվի մրցութային փաթեթի անգլերեն տարբերակը:

41. Հանձնաժողովը կարող է պահանջել գրավոր պարզաբանումներ ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ: Պարզաբանումները չեն կարող փոփոխել դիմումի բովանդակությունը (ոչ գինը, ոչ առանցքային տեխնիկական պայմանները): Բոլոր պարզաբանումները պետք է պատշաճ փաստաթղթավորվեն և կազմեն մրցութային փաթեթի մաս:

42. Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի հետ սահմանված կարգով կնքվում է պայմանագիր՝ համաձայն Երևանի քաղաքապետի 2025 թվականի -------- որոշման N 9 հավելվածի:

43. Հանձնաժողովի որոշմամբ մրցույթը կարող է վերացվել՝ պահանջի վերացման կամ այլ հիմնավորման դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

44. Յուրաքանչյուր մասնակից պետք է փակ ծրարում ներկայացնի Երևանի քաղաքապետի 2025 թվականի -------- որոշման N 5 հավելվածով հաստատված դիմումի ձևին համապատասխան լրացված և կնքված դիմումը: Մրցութային փաթեթը ներկայացվում է փակ ծրարով, առանց գրառումների: Սույն պայմանը չպահպանելու դեպքում՝ փաթեթը չի մասնակցի մրցույթին: Եթե ծրարում առկա լինի երկու դիմում, կամ դիմումում նշված լինեն առաջարկված տարբերակներից երկուսը կամ ավելին, ապա տվյալ մասնակցի դիմումը չի քննարկվում: Յուրաքանչյուր մասնակից կարող է ներկայացնել միայն մեկ մրցութային դիմում:

45. Բոլոր ստացած փաթեթներին տրվում են ծածկագրեր: Ընդ որում միևնույն փաթեթով ներկայացված պաստառի և տեղեկատվական թերթիկի ծածկագրերը պետք է համապատասխանեն միմյանց:
46. Կապ. հարցերի համար կարող եք կապ հաստատել մրցույթի հանձնաժողովի քարտուղարի հետ, gorik.avetisyan@yerevan.am էլ փոստով/, Հեռ. +374 11514188:
47. Բողոքները ներկայացնելու կարգ. **Բ**ողոքները կարող են ներկայացվել գրավոր՝ մրցույթի հանձնաժողովի քարտուղարին (gorik.avetisyan@yerevan.am էլ փոստով/), մրցույթի արդյունքների վերաբերյալ ծանուցումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:
48. Բողոքները չեն կարող ինքնաբերաբար կասեցնել գործընթացները, եթե հանձնաժողովի կողմից նման որոշում չի կայացվել:

49. Այլ պայմաններ. Մրցույթում հաղթող է համարվում սույն որոշման N 3 հավելվածով նախատեսված՝ Մրցույթի առաջին և երկրորդ փուլերի գնահատման արդյունքների հանրագումարով առավելագույն միավորներ հավաքած մասնակիցը: Այն դեպքում, երբ մրցույթում ներկայացված դիմումների գնահատման ժամանակ մասնակիցները ստանում են հավասար միավորներ, ապա հանձնաժողովը հավասար միավորներ ստացած մասնակիցներին հրավիրում է բաց բանակցությունների, որի անցկացման վայրի և ժամի մասին մասնակիցները տեղեկացվում են նիստի ժամանակ կամ իրենց կողմից տրամադրված էլեկտրոնային հասցեին համապատասխան

ծանուցագիր ստանալով: Հավասար միավորներ ստացած մասնակիցներից մրցույթում հաղթող է ճանաչվում բանակցությունների արդյունքում հանձնաժողովի քվեարկությամբ որպես հաղթող ընտրված մասնակիցը, իսկ հավասար միավորներ ստացած որևէ մասնակցի կողմից բանակցությունների ընթացքում հաղթող չճանաչվելու դեպքում անցկացվում է նոր մրցույթ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Հավելված N 3
Երևանի քաղաքապետի
2025թ. դեկտեմբերի23-ի
հ._____5249_____-Ա որոշման

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԽԱՌԸ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՆԵՐԴՐՈՂԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԲԱՑ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԵՐԿՓՈՒԼ ՄՐՑՈՒՅԹԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

1. Մասնակիցների «Մասնակցության իրավունք» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով. Մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու մրցույթին (այսուհետ՝ Մրցույթ), եթե մասնակիցը դիմումով ներկայացրել է սույն որոշման N 5 հավելվածով նախատեսված փաստաթղթերը և սույն որոշման N 6 հավելվածով սահմանված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն:

2. Մրցույթին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

   1) որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ,
   2) որոնք Երևան համայնքի հանդեպ ունեն չկատարված ժամկետանց պարտավորություններ, բացառությամբ, եթե դատական կարգով վիճարկում է տվյալ պարտավորության առկայությունը,
   3) որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը դիմումը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ հանրային ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է:

3. Մրցույթի մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

   1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը,
   2) առանցքային անձնակազմի մասնագիտական որակավորման համապատասխանություն,
   3) բնապահպանական նորմերի համապատասխանության հավաստում,
   4) շրջանաձև տնտեսության դրույթներին առավելագույն համապատասխանություն, ,

4. Մրցույթի առաջին փուլում ներկայացվող դիմումները գնահատվում են հետևյալ կարգով.

1) Մասնակցի՝ «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշի գնահատման համար մասնակիցը ներկայացնում է հետևյալ տեղեկությունները՝

Նախկինում կատարված պայմանագրեր		
Առարկան	Ծավալը՝ գումարային արտահայտությամբ և ժամանակահատվածը	Պատվիրատուի անվանումը և կոնտակտային տվյալներ
1.		
2.		
3.		

Մասնակիցը համարվում է նշված պահանջին բավարարող, եթե ներկայացնում է պահանջվող տեղեկությունները, ներառյալ, որ դիմումը ներկայացնելու տարվա և դրան նախորդող տաս տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նմանատիպ է համարվում ոչ պակաս, քան տարեկան առնվազն 250 000 տոննա ծավալով խառը կենցաղային թափոնների վերամշակման գործարանի կառուցումը: Ընդ որում, գնահատման առավելագույն գործակից կսահմանվի՝ նախագծել-կառուցել-շահագործել (DBO) տարբերակի համար.բ. առաջին փուլի մասնակիցը, որպես որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (կամ պայմանագրերի) պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի կատարումը ընդունող և հավաստող ակտի (հանձման-ընդունման ակտ, արձանագրություն և/կամ համարժեք այլ փաստաթուղթ) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

2) «Առանցքային անձնակազմի մասնագիտական որակավորման համապատասխանություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

Առանցքային անձնակազմի որակավորում		
Անվանում	Փորձառության ոլորտ	Փորձառություն (տարի)

1. Գլխավոր ինժեներ		
2. Թիմի ղեկավար		

Մասնակիցը համարվում է նշված պահանջին բավարարող, եթե գլխավոր ինժեների համար առկա է նմանատիպ գործունեության իրականացման՝ այն է՝ գործարանի նախագծման/կառուցման առնվազն 7 տարվա աշխատանքային փորձ.բ. Մասնակիցը համարվում է նշված պահանջին բավարարող, եթե թիմի ղեկավարի համար առկա է նմանատիպ գործունեության իրականացման՝ այն է՝ գործարանի շահագործման առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ.

3) «Բնապահպանական նորմերի համապատասխանության» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով ՝

մասնակիցը համարվում է նշված պահանջին բավարարող, եթե տեխնիկական առաջարկում ներկայացվող գործարանի արտանետումները համապատասխանում են սահմանային թույլատրելի ԵՄ նորմերով սահմանված պահանջներին (Աղբի այրման դիրեկտիվ 2000/76/EC) և (կամ) համապատասխանում են արտանետումների սահմանային թույլատրելի տեղական նորմերով սահմանված պահանջներին («Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենք).բ. մասնակիցը համարվում է նշված պահանջին բավարարող, եթե տեխնիկական առաջարկով ներկայացվող գործարանի տեխնոլոգիան համապատասխանում է տվյալ ոլորտի ISO (միջազգային) ստանդարտներին (ISO 14001, 45001, 9001, 50001 կամ համարժեք):

5. Մասնակիցների՝ առաջին փուլում գնահատվող չափանիշներին համապատասխանությունը գնահատվում է հետևյալ կերպ.

Հ/Հ	Որակավորման չափանիշները	Գնահատման միավորները	Գնահատման համար սահմանված պահանջները
1.	Մասնագիտական գործունեություն	10-25	Գնահատման նվազագույն շեմը սահմանվում է 10 միավոր: Նվազագույն միավոր տրվում է «Մասնագիտական գործունեության

			համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» համապատասխանող փաստաթղթերի մեկ պայմանագրային փաթեթ ներկայացվելու դեպքում: Յուրաքանչյուր հավելյալ ներկայացված նմանատիպ պայմանագրային փաթեթը կստանա լրացուցիչ 5 միավոր: Առավելագույն գնահատականը չի կարող ավել լինել 25 միավորից: **Կդիտարկվեն միայն ամբողջական կատարված (ավարտված) պայմանագրերը:**
2.	Մասնագիտական գործունեության ոլորտ	10-15	Գնահատման նվազագույն շեմը սահմանվում է 10 միավոր: Նվազագույն միավոր տրվում է «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» համապատասխանող փաստաթղթերի՝ միայն *նախագծման և կառուցման* պայմանագրային փաթեթ ներկայացվելու դեպքում: Հավելյալ 5 միավոր կտրվի նախագծում-կառուցում-

			շահագործում պայմանագրային փաթեթ ներկայացվելու դեպքում: Առավելագույն գնահատականը չի կարող ավել լինել 15 միավորից:
3.	Առանցքային անձնակազմ	10 -15	«Առանցքային անձնակազմի մասնագիտական որակավորման համապատասխանություն» չափանիշը գնահատվում է նվազագույնը 10 միավոր՝ Գլխավոր ինժեների՝ առնվազն 7 տարվա, և թիմի ղեկավարի՝ առնվազն 5 տարվա փորձառության դեպքում: Նշված երկու մասնագետների 10 և ավել տարվա մասնագիտական փորձի դեպքում կտրվի լրացուցիչ 5 միավոր: Առավելագույն գնահատականը չի կարող ավել լինել 15 միավորից:
4.	Բնապահպանական նորմերի համապատասխանություն	5-10	Գնահատման նվազագույն շեմը սահմանվում է 5 միավոր: Նվազագույն միավորը տրվում է նորմերից մեկի պահանջներին բավարարելու դեպքում: Եվ միջազգային և տեղական նորմերի համապատասխանությունը ապահովում է լրացուցիչ 5 միավոր:

5.	Տվյալ ոլորտի ISO (միջազգային) ստանդարտներին (ISO 14001, 45001, 9001, 50001 կամ համարժեք) համապատասխանություն	0-5	տեխնիկական առաջարկով ներկայացվող գործարանի տեխնոլոգիայի՝ տվյալ ոլորտի ISO (միջազգային) ստանդարտների (ISO 14001, 45001, 9001, 50001 կամ համարժեք) առկայության դեպքում մասնիկցը գնահատվում է 5 միավոր:
ԸՆԴԱՄԵՆԸ		Նվազագույնը՝ 35; Առավելագույնը՝ 70	

6. Մրցույթի առաջին փուլի արդյունքներով երկրորդ փուլ անցնում են 35 միավորի շեմը հաղթահարած մասնակիցները:

7. Մրցույթի առաջին փուլը հաղթահարած մասնակիցը/ մասնակիցները, երկրորդ փուլի մասնակցության համար պետք է ներկայացնեն՝

1) իրենց գտնվելու վայրի օրենսդրության պահանջներին համապատասխան տարեկան աուդիտի դրական եզրակացություն /դրական աուդիտորական եզրակացություն/ (նվազագույնը մեկ տարվա վաղեմության):

2) Մրցույթի պահանջներին համապատասխան գործարանի նախագծման, շինարարության և շահագործման մեկնարկի ժամանակացույց՝ հստակ ժամկետների նշմամբ:

3) երկրորդ փուլով կգնահատվի նաև փաստաթղթերով ներկայացված՝ աղբի վերամշակման գործարանի նախատեսվող լուծումների էներգաարդյունավետությունը, շրջանաձև տնտեսության դրույթներին համապատասխանությունը:

8. Մասնակիցների՝ երկրորդ փուլում գնահատվող չափանիշներին համապատասխանությունը գնահատվում է հետևյալ կերպ.

Հ/Հ	Չափանիշները	Գնահատման միավորները	Գնահատման համար սահմանված պահանջները
1.	Դրական աուդիտորական եզրակացություն	0-5	Գնահատման նվազագույն շեմը սահմանվում է 0: Միավոր չի տրվում, եթե մասնակիցը չի ներկայացնում գտնվելուվայրի օրենսդրության պահանջներին համապատասխան տարեկան աուդիտի դրական եզրակացություն (նվազագույնը մեկ տարվա վաղեմության): Առավելագույն 5 միավոր տրվում է նվազագույնը մեկ տարվա վաղեմության դրական աուդիտորական եզրակացություն ներկայացնելու դեպքում:
2.	ծրագրի մեկնարկի ժամկետներ	10-20	Գնահատման նվազագույն շեմը սահմանվում է 10 միավոր: Նվազագույն միավորը տրվում է Ծրագրի մեկնարկը, այն է՝ գործարանի կառուցման նախագծի հաստատման և բոլոր փորձաքննությունների ստացման գործընթացները՝ 24-36 ամսում կազմակերպելու դեպքում: 18-24 ամսում Ծրագրի մեկնարկը կազմակերպելու դեպքում տրվում է առավելագույն 20 միավոր:
3.	Գործարանի շահագործման մեկնարկի ժամկետ	10-20	Գնահատման նվազագույն շեմը սահմանվում է 10 միավոր: Նվազագույն միավորը տրվում է հաստատված նախագծով շինարարության ավարտը և շահագործման մեկնարկը 18 ամսում կազմակերպելու դեպքում: 12 ամսում գործարանի շահագործման մեկնարկը կազմակերպելու դեպքում տրվում է առավելագույն 20 միավոր:

4.	Խառը կենցաղային թափոնների վերամշակման գործարանի նախատեսվող լուծումների շրջանաձև տնտեսության դրույթներին համապատասխանություն	5-25	Գնահատման նվազագույն շեմը սահմանվում է 5՝ վերամշակման երկու փուլերի (տեսակավորում, ոչնչացում) համար: Յուրաքանչյուր լրացուցիչ լուծման համար (նյութերի վերականգնում, կենսագազի ստացում, կոմպոստացում և այլն) կտրվի լրացուցիչ 5-ական միավոր: Առավելագույն գնահատականը չի կարող ավել լինել 25 միավորից:
5.	Հավելյալ պահանջներ ներդրողի կողմից	0-30	Գնահատմամն առավելագույն շեմը սահմանվում է 30 միավոր: Ներկայացվող յուրաքանչյուր պահանջի համար առավելագույն նշված միավորից կատարվում է 5 միավորի նվազեցում:
ԸՆԴԱՄԵՆԸ		Նվազագույնը ՝ 25; Առավելագույնը՝ 100	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Հավելված N 4
Երևանի քաղաքապետի
2025թ. դեկտեմբեր 23-ի
հ._____5249_____-Ա որոշման

Երևան քաղաքում խառը կենցաղային թափոնների
վերամշակման գործարանի կառուցման և շահագործման
ներդրողի ընտրության բաց հրապարակային երկփուլ մրցույթի
գնահատող հանձնաժողովին

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Մասնագիտական գործունեության՝ պայմանագրով նախատեսված գործունեությանը համապատասխանության մասին

Առարկան	Ծավալը՝ գումարային արտահայտությամբ և ժամանակահատվածը	Պատվիրատուի անվանումը և կոնտակտային տվյալներ	Ներկա կարգավիճակ (գործող / դադարեցված)
1			
2			
3			

Սույնով _____ -ն հայտնում և հավաստում է,
Մասնակցի անվանումը

որ դիմումը ներկայացնելու տարվա և դրան նախորդող տասը տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է համանման առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագրերը և դրանց կատարումը հավաստող փաստաթղթերը կցվում են:

_____ _____

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը ստորագրությունը Կ. Տ.

_____2026 թ. (ամսաթիվը, ամիսը)

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Հավելված N 5
Երևանի քաղաքապետի
2025 թ. դեկտեմբերի23ի
հ._____5249-Ա որոշման

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԽԱՌԸ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՆԵՐԴՐՈՂԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԲԱՑ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԵՐԿՓՈՒԼ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎ

_____ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված Երևան քաղաքում խառը կենցաղային թափոնների վերամշակման գործարանի կառուցման և շահագործման ներդրող ընտրելու բաց հրապարակային երկփուլ մրցույթին և հրապարակային ծանուցմանը համապատասխան ներկայացնում է դիմում՝ հետևյալ տեղեկատվությամբ.

Դիմումատուն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է
_____ ռեզիդենտ:
երկրի անվանումը

Դիմումատուի՝

հարկ վճարողի հաշվառման համարն է՝ _____

էլեկտրոնային փոստի հասցեն է՝ _____

գործունեության հասցեն է՝ _____

հեռախոսահամարն է՝_____

Սույնով դիմումատուն հայտարարում և հավաստում է,որ բավարարում է մրցույթի մասնակցության իրավունքի պահանջներին:

Հավաստում է, որ մրցույթին մասնակցելու շրջանակում թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն;

Անունը Ազգանունը Հայրանունը	ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված՝ անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը	Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված՝ անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը

Կից ներկայացվում են Երևանի քաղաքապետի 2025 թվականի --------- որոշման N 7 հավելվածով սահմանված փաստաթղթերը՝ առդիր _____ էջ:

_____ _____

Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) (ստորագրությունը) Կ. Տ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Հավելված N 6
Երևանի քաղաքապետի
2025 թ. դեկտեմբերի23-ի
հ._____5249-Ա որոշման

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Մրցույթի հայտարարությամբ սահմանված մրցույթին մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին

_____-ն հայտնում և հավաստում է, որ.
Ընթացակարգի մասնակցի անվանումը

1) դատական կարգով սնանկ ճանաչված չէ,

2) Երևան համայնքի հանդեպ չունի չկատարված ժամկետանց պարտավորություններ, բացառությամբ, եթե դատական կարգով վիճարկում է տվյալ պարտավորության առկայությունը. ,

3) իր գործադիր մարմնի ներկայացուցիչը դիմումը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ հանրային ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է:

4) բացակայում է գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, անուն, ազգանունը) (ստորագրությունը)

_____ 20 թ.
(ամսաթիվը, ամիսը)

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Հավելված N 7
Երևանի քաղաքապետի
2025թ. դեկտեմբերի 23 -ի
հ. 5249 -Ա որոշման

ՑԱՆԿ

_____մրցույթի մասնակիցների կողմից ներկայացվող փաստաթղթերի

N	**Փաստաթղթի անվանումը**	**Հրավերի համապատասխան հավելվածը**	**Ներկայացման ժամկետ**	**Նշումներ**
1.	Բաց երկփուլ ընթացակարգին մասնակցելու դիմում	Հավելված 5	Առաջին փուլ	
2.	Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում՝ համատեղ գործունեության պայմանագիր		Առաջին փուլ	Առդիր
3.	Հայտարարություն՝ բաց երկփուլ ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին	Հավելված 6	Առաջին փուլ	
4.	Տեղեկանք՝ Մասնագիտական գործունեության համապատասխանությունը պայմանագրով նախատեսված գործունեության մասին	Հավելված 4	Առաջին փուլ	Առդիր պայմանագիր/եր

5.	Ոչ գնային առաջարկ (տեխնիկական և տեխնոլոգիական առաջարկ)		Առաջին փուլ	Առդիր
	Աուդիտորական եզրակացություն		Երկրորդ փուլ	Առդիր
	Գործողությունների հաստատված ժամանակացույց		Երկրորդ փուլ	Առդիր
	Հավելյալ պահանջներ ներդրողի կողմից		Երկրորդ փուլ	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Հավելված N 8
Երևանի քաղաքապետի
2025թ. դեկտեմբերի 23-ի
հ.____5249_-Ա որոշման

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԽԱՌԸ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՆԵՐԴՐՈՂԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԲԱՑ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԵՐԿՓՈՒԼ ՄՐՑՈՒՅԹԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

ՆՈՅԵՄԲԵՐ 2025

ՑԱՆԿ

1. ՆԱԽԱԲԱՆ 2
2. Սոցիալ-տնտեսական բնութագիր 2
3. Թափոնների տվյալներ: 3
Երևան քաղաքի թափոնները: 3
Թափոնների տարանջատում և վերամշակում: 6
Թափոնների կառավարման բարելավման սցենարներ: 7
4. Տեխնիկական պահանջներ 8
Պարտադիր պահանջներ 8
Նախագծային հզորություն և շահագործման տևողություն 8
Վերամշակման/այրման ենթակա թափոնների տեխնիկական բնութագիր 9
Վերամշակման կիրառվող տեխնոլոգիա 9
Բնապահպանական և արտանետումների չափորոշիչներ 9
Էներգիայի և ռեսուրսների արդյունավետություն 10
Մնացորդների և ենթամթերքների կառավարում 10
Ավտոմատացում, մոնիթորինգ և վերահսկողություն 11
Առողջություն, անվտանգություն և աշխատանքի պաշտպանություն 11
Փաստաթղթավորում, մասնագետների ուսուցում և գործարանի հանձնում 11
Երաշխիք և ետերաշխիքային սպասարկում 12
Գործարանի կառուցման համար հողհատկացում 12

1. ՆԱԽԱԲԱՆ

Իր կոշտ թափոնների կառավարման ռազմավարության շրջանակներում, Երևանի քաղաքապետարանը բացահայտել է համայնք-մասնավոր համագործակցության հնարավորությունը Երևանում: Համայնք-մասնավոր համագործակցությամբ հնարավոր կլինի պատշաճ կերպով կազմակերպել թափոնների հեռացումը՝ համաձայն միջազգային հաստատված պրակտիկայի: Նախատեսվում է, որ նախագիծը կիրականացվի մասնավոր հատվածի կողմից՝ գործարանի կառուցման և շահագործման միջոցով:

Քաղաքի նկարագրություն: Երևանը Հայաստանի մայրաքաղաքն ու ամենամեծ քաղաքն է: Այն ունի հատուկ վարչական կարգավիճակ: Այն երկրի միակ բնակավայրն է, որը վերջին 20 տարիների ընթացքում բնակչության աճ է գրանցել: 2011-2023 թվականների ընթացքում քաղաքի բնակչությունն աճել է մոտ 3%-ով:

2. Սոցիալ-տնտեսական բնութագիր

Երևանը ՀՀ ամենամեծ տնտեսական կենտրոնն է: 2021 թվականին քաղաքն ապահովել է ազգային ՀՆԱ-ի 57%-ը:

Գծապատկեր 1. 2023 թվականին քաղաքի բաժինը ազգային արտադրանքի մեջ հիմնական ոլորտներում.



Արդյունաբերական գործունեությունը Երևանում բազմազան է, ներառյալ քիմիական նյութեր, մետաղներ և պողպատե արտադրանք, մեքենաներ, ռետինե արտադրանք, պլաստմասսա, գորգեր և կարպետներ, տեքստիլ, հագուստ և կոշիկ, զարդեր, փայտե արտադրանք և կահույք, շինանյութեր և քարի մշակում, ալկոհոլային խմիչքներ, հանքային ջուր, կաթնամթերք և վերամշակված սնունդ:

Ազգային վիճակագրական կոմիտեի (ԱՎԿ) տվյալներով՝ Երևանի համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) 2025 թվականի առաջին եռամսյակում գրանցել է 5.2% աճ՝ 2024 թվականի հունվար-մարտ ամիսների համեմատ:

3. Թափոնների տվյալներ:

Քանի որ Երևանում առաջացող կոշտ կենցաղային թափոնների ծավալի վերաբերյալ ճշգրիտ քանակական տվյալներ առկա չեն, աղբավայրում ամեն տարի հեռացվող կոշտ կենցաղային թափոնների ծավալը գնահատելիս հղում է կատարվում տարբեր աղբյուրների: Առավել հավաստի է համարվում այն գնահատականը, որ աղբավայրում տարեկան հեռացվող ծավալը կազմում է մոտ 450,000 տոննա:

Աղբավայրում հեռացման ենթակա թափոնների քանակի գնահատման համար օգտագործվել են տարբեր աղբյուրներ:

- Հայաստանի ԿԿԹ կառավարման ոլորտի գնահատման և բարեփոխումների ծրագիր, Երևանի քաղաքային թափոնների կառավարման վերլուծական զեկույց (2024 թվականի մայիսի 17);
- Երևանի կոշտ թափոնների ծրագրի վերջնական հաշվետվություն (հուլիս 2023);
- «Երևանում քաղաքային կոշտ թափոնների կառավարման վերաբերյալ խորհրդատվական ուսումնասիրություն» (Fichtner, 2009);
- Երևանի կոշտ թափոնների ծրագիր – Տեխնիկական իրագործելիության ուսումնասիրություն – Առաջադրանք 1 հաշվետվություն (Hydro Ingenieure, 2012);
- Հայաստանի Հանրապետության թափոնների քանակի և կազմի ուսումնասիրություն (LL Bolagen, 2020);
- ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներ;
- Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում /ԵԱՍՄ/ համայնքային հիմնարկի բանավոր հայտարարությունները;

Երևան քաղաքի թափոնները:

FICHTNER-ի զեկույցում նշվում է, որ ՀՀ վիճակագրական կոմիտեի տեղեկատվության և տեղական փորձագետների գնահատման համաձայն՝ թափոնների քանակը 2004-2009 թվականներին կայունացել է մոտ 800,000 մ^3/տարի մակարդակում: Ավելին, հեղինակը եզրակացնում է, որ մոտավորապես 300,000-330,000 տոննա տարեկան ԿԿԹ ընդհանուր առաջացումը, կարծես, իրատեսական գնահատական է Երևան

քաղաքի համար 2009 թվականի դրությամբ: Բացի այդ, մշակվել է կանխատեսում՝ 3 տարբեր սցենարներով: Այս կանխատեսման համաձայն՝ 2023 թվականին ԿԿԹ առաջացումը պետք է լինի 390,000-ից մինչև 440,000 տոննա/տարեկան:



Գծապատկեր 2. ԿԿԹ-ի կանխատեսում (FICHTNER)

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) համար մշակված տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունը՝ 2023 թվականի հուլիսի վերջնական հաշվետվությունը, ցույց է տալիս, որ Նուբարաշենի աղբավայր ընդունվող թափոնների ընդհանուր քանակը կազմում է օրական մոտավորապես 600 տոննա, ինչը համապատասխանում է տարեկան մոտ 200,000 տոննայի:

Հայաստանի Հանրապետության թափոնների քանակի և կազմի ուսումնասիրությունը տարբեր աղբյուրներից հավաքել է երկրում թափոնների առաջացման վերաբերյալ տեղեկատվություն և տվյալներ և համեմատել դրանք նմանատիպ տնտեսական զարգացում ունեցող այլ երկրների հետ: Այդ ուսումնասիրության վերլուծության համաձայն՝ խորհուրդ է տրվում Երևանում մեկ շնչի հաշվով թափոնների առաջացումը հաշվարկել տարեկան 300 կգ-ով: Երբ այս ցուցանիշը բազմապատկվում է Երևանի ներկայիս բնակչության մոտավոր թվաքանակով (1,141,143 մարդ 01.01.2025 թվականի դրությամբ, տվյալը՝ պաշտոնական վիճակագրությունից), ստացվում է մոտ 350,000 ԿԿԹ ընդհանուր առաջացում:

2024 թվականին քաղաքային թափոնների քանակը գերազանցում է տարեկան 350,000 տոննան: Բնակչության կանխատեսվող դանդաղ աճի և բնակչության եկամուտների սպասվող աճի պատճառով, կանխատեսվում է, որ քաղաքային

թափոնների քանակը 2043 թվականին կաճի ավելի քան 18%-ով՝ հասնելով տարեկան մոտ 420,000 տոննայի: Օրգանական թափոնները գերակշռող մասն են կազմում՝ մոտ 57%, մինչդեռ վերամշակվող նյութերը գնահատվում են ընդհանուր թափոնների մոտ 25%-ը:

Գծապատկեր 3. Թափոնների կազմը Երևանում, 2016թ.

Թափոնի տեսակ	Տոկոս	Տոննա
Օրգանական թափոններ	57.0%	202,755
թուղթ	2.7%	9,675
ստվարաթուղթ	4.0%	14,051
տետրապակ	0.3%	1,209
ապակի	3.2%	11,383
PET	2.1%	7,470
PE film	5.1%	18,284
Այլ պլաստիկ (PS, PP, PVC, HDPE)	4.2%	15,082
Մետաղներ	3.2%	11,383
Ալյումինիում	0.3%	1,067
Տեքստիլ	2.7%	9,604
Կաշի	0.3%	1,067
Փայտ	0.6%	2,134
Տակդիրներ	4.4%	15,651
Մանր մասնիկներ <10mm	5.8%	20,631
Չեզոք նյութեր	4.0%	14,264
Ընդամենը	**100%**	**355,711**

Մեկ շնչի հաշվով տարեկան առաջացող թափոնների քանակը գնահատելիս մասնավոր և առևտրային թափոնները առանձին չեն դիտարկվում:

Աղբահանություն: Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում /ԵԱՍՄ/ համայնքային հիմնարկն այսօր իր աղբը հասցնում է միայն Նուբարաշենի աղբավայր՝ առանց վճարի, և պատասխանատու է քաղաքի ամբողջ տարածքում աղբահանության համար:

Երևանում աղբահանության ծառայությունների ծածկույթը 100% է: Աղբահանության ավտոպարկը բաղկացած է 65 բեռնատարից, և քաղաքում տեղադրված է մոտ 11,700 խառը թափոնների տարա՝ 1.1 մ3 տարողությամբ: Աղբահանությունն իրականացնում

է 2019 թվականին ստեղծված Երևանի աղբահանության և սանիտարական մաքրման համայնքային հիմնարկը:

<u>Թափոնների հեռացում:</u> Հավաքված քաղաքային ԿԿԹ-ն տեղադրվում են Նուբարաշենի համայնքային աղբատեղիում: Այն հիմնադրվել է 1950-ական թվականներին, սակայն չի հանդիսանում սանիտարական աղբավայր: Ներկայումս այն զբաղեցնում է մոտ 50 հա տարածք և Հայաստանի ամենամեծ աղբատեղին է: Մինչև վերջերս այն շահագործվում էր «Էրեբունի մաքրություն» ՍՊԸ մասնավոր օպերատորի կողմից: Սակայն վատ կառավարման հետևանքով պայմանագիրը խզվել է, և այն անցել է համայնքին:

Նկար 1. Նուբարաշենի աղբատեղի



2009 թվականին, «Երևան» համայնքի և ճապոնական «Շիմիցու» կորպորացիայի հետ կնքված պայմանագրի շրջանակներում, Նուբարաշենի աղբավայրում իրականացվել է աղբավայրային գազի հավաքման և այրման նախագիծ: Ծրագրի շրջանակներում մոտ 8 հեկտար տարածքում տեղադրվել է կենսագազի հավաքման համակարգ: Հավաքված գազը այրվում է: Նախագիծը նախատեսում էր աղբավայրային գազի հավաքում 16 տարվա ընթացքում:

Թափոնների տարանջատում և վերամշակում:

2020 թվականին Երևան համայնքը նախաձեռնեց թափոնների՝ աղբյուրում տարանջատման ծրագիր՝ ստեղծելով չոր վերամշակվող թափոնների առանձին հավաքման 135 կետ: Այս հավաքման կետերը ընդլայնվում են և ներկայումս հասել են 204-ի: Բացի այդ, իրականացվում է մոտ 230 բիզնեսներից հավաքում: Ստորև

բերված դիագրամը ցույց է տալիս վերամշակվող նյութերի վաճառքից ստացված եկամուտները 2024 թվականի համար:

Գծապատկեր 4. 2024 թվականին հավաքված վերամշակվող նյութերի քանակը և վերամշակվող նյութերի գները

Ափոնի տեսակ	**Վերամշակման ընկերություններին մատակարարված տարեկան քանակները 2024 թվականին**	**Վաճառված վերամշակվող նյութերի գինը մեկ կիլոգրամի համար՝ ներառյալ ԱԱՀ-ն**
Թուղթ և ստվարաթուղթ	640 տոննա	45-65 ՀՀԴ
Ապակի	76 տոննա	29 ՀՀԴ
Պլաստիկ.	44 տոննա	
- Պոլիէթիլեն տերեֆտալատ (PET)		70 ՀՀԴ
- Պոլիպրոպիլեն (PP)		150 ՀՀԴ
- Պոլիէթիլեն (PE)		50 ՀՀԴ
Ալյումին	500կգ	300 ՀՀԴ

Թափոնների կառավարման բարելավման սցենարներ:

Բազմաթիվ քննարկումների և խորհրդակցությունների արդյունքում Երևանի քաղաքապետարանը որոշեց առաջ շարժվել կոշտ թափոնների կառավարման վերաբերյալ ստորև նկարագրված սցենարով:

Սանիտարական աղբավայրի հիմնում
Չոր վերամշակվող նյութերի տարանջատում 3 կամ 4 կոնտեյներային համակարգում
Կոշտ կենցաղային թափոնների վերամշակման/այրման գործարանի հիմնում

<u>Մրցույթի առարկա հանդիսացող գործարանին ներկայացվող պահանջներ.</u> Թափոնների վերամշակման/այրման գործարանը կընդունի Երևան քաղաքի ամբողջ ԿԿԹ: Գործարանում կարող են իրականացվել հետևյալ գործողությունները.

• Կենսաքայքայվող ֆրակցիայի տեսակավորում հետագա քայքայման և կոմպոստանման արտադրանքի ստացման համար;

• Խառը թափոնների տեսակավորում չոր վերամշակվող նյութերի արդյունահանման համար;

• Թափոնից ստացված վառելիքի/էներգիայի արտադրություն;

• Մնացորդային ֆրակցիայի տեղափոխում աղբավայր:

4. Տեխնիկական պահանջներ

Այս բաժինը սահմանում է խառը ԿԿԹ վերամշակման/այրման գործարանի /Գործարան/ նախագծման, կառուցման, տեղադրման և շահագործման նվազագույն տեխնիկական և կատարողական պահանջները:

Պարտադիր պահանջներ

Գործարանը պետք է հագեցած լինի տեսակավորման հոսքագծով:

Գործարանին կից պետք է առկա լինի ստացվող ԿԿԹ ժամանակավոր պահեստավորման համար նախատեսված սանիտարական բջիջ (գեոմեմբրանով պատված): Վերջինիս առկայությունը կարևոր է նաև արտակարգ իրավիճակների, ժամանակավոր խափանումների և տեխնիկական սպասարկմամբ պայմանավորված՝ գործարանի աշխատանքի դադարի ընթացքում աղբի պահեստավորման համար:

Նախագծային հզորություն և շահագործման տևողություն

Գործարանը պետք է նախագծվի օրական առնվազն 600 տոննա թափոն մշակելու համար՝ տարեկան միջին ցուցանիշի հիման վրա, առավելագույն բեռնվածության պայմաններում՝ նոմինալ հզորությունից առնվազն [10%] բարձր:

Նախագծումը պետք է հնարավորություն տա ապագայում ընդլայնել առնվազն [10%]՝ առանց խոշոր վերափոխման:

Գործարանը պետք է նախագծվի 30-35 տարվա նվազագույն շահագործման ժամկետով:

Վերամշակման/այրման ենթակա թափոնների տեխնիկական բնութագիր

Կայանը պետք է կարողանա ընդունել և մշակել հետևյալը՝

- Քաղաքային կոշտ կենցաղային թափոններ (ԿԿԹ), ներառյալ խառը թափոնների հոսքերը:
- Կենսաքայքայվող/օրգանական թափոններ:
- Արդյունաբերական ոչ վտանգավոր թափոններ:
- Նուբարաշենում կուտակված աղբ /ընդհանուր ընդունվող թափոնների մինչև 20% համամասնությամբ/:

Գործարանը պետք է կայուն լինի սեզոնային և թափոնների կազմային տատանումների նկատմամբ:

Վերամշակման կիրառվող տեխնոլոգիա

Վերամշակման գործընթացը պետք է հիմնված լինի լավագույն հասանելի տեխնոլոգիական լուծումների վրա և համապատասխանի ԵՄ ստանդարտներին և/կամ միջազգայնորեն ճանաչված համարժեքներին, ինչպես նաև տեղական բնապահպանական պահանջներին:

Ընդունելի տեխնոլոգիաները կարող են ներառել, բայց չսահմանափակվել հետևյալով՝

- Մեխանիկական-կենսաբանական մշակում (ՄԿՄ)
- Անաէրոբ եղանակով ոչնչացում
- Թափոններից էներգիայի ստացում (այրում՝ էներգիայի վերականգնմամբ, գազաֆիկացմամբ կամ պիրոլիզով)
- Օրգանական մասնաբաժնի կոմպոստացում

Ընտրված գործընթացը պետք է հիմնավոր ապացույցներ պարունակի մնացորդների անվտանգ մշակման վերաբերյալ:

Նախապատվությունը կտրվի այն լուծումներին, որոնք առավելագույնի են հասցնում նյութերի վերականգնումը, էներգաարդյունավետությունը և շրջանաձև տնտեսության սկզբունքները:

Բնապահպանական և արտանետումների չափորոշիչներ

Գործարանը պետք է համապատասխանի.

- ԵՄ արդյունաբերական արտանետումների մասին դիրեկտիվին (2010/75/EU) կամ համարժեք ազգային չափորոշիչներին;
- Ազգային բնապահպանական և առողջապահական օրենսդրությանը:

Առաջադրվող նվազագուն պահանջներն են.

- Օդային արտանետումներ. Համապատասխանություն տեղական օրենսդրությանը և/կամ ԵՄ դիրեկտիվի արժեքներին:
- Ջրի բացթողումներ. մաքրված կեղտաջրերը պետք է համապատասխանեն ազգային չափորոշիչներին և/կամ պիտանի լինեն վերօգտագործման համար:
- Հոտի վերահսկում. հաստատության սահմանից 500 մետր հեռավորության վրա հոտի բացակայություն:
- Աղմուկի արտանետումներ. պետք է համապատասխանեն տեղական օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Էներգիայի և ռեսուրսների արդյունավետություն

Գործարանը պետք է հասնի էներգիայի նվազագույն ինքնաբավության (օրինակ՝ էլեկտրաէներգիա, ջերմային էներգիա, կենսագազ): Պետք է ներառվեն ջրի վերամշակման և վերօգտագործման մեթոդները: Նախապատվությունը պետք է տրվի վերականգնվող էներգիան ինտեգրող լուծումներին (օրինակ՝ արևային ֆոտովոլտային էներգիա օժանդակ կարիքների համար):

Մնացորդների և ենթամթերքների կառավարում

Բոլոր մնացորդային նյութերը (հատիկային մոխիր, թռչող մոխիր, տիղմ և այլն) պետք է կայունացվեն և ուտիլիզիցվեն ՝ վնասակար նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների (ՍԹԱ) նորմատիվներին համապատասխան:

Վտանգավոր թափոնների կառավարում

Վտանգավոր թափոնները պետք է անվտանգ կերպով փաթեթավորվեն, պահվեն և տեղափոխվեն ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի հ. 121-Ն որոշմամբ (Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին) սահմանված կարգով վտանգավոր թափոնների գործածության լիցենզիա ունեցող կազմակերպության տարածք:

Ավտոմատացում, մոնիթորինգ և վերահսկողություն

Գործարանը պետք է հագեցած լինի SCADA կամ համարժեք կառավարման համակարգով՝ հիմնական շահագործման պարամետրերի իրական ժամանակի մոնիթորինգով:

Օդային արտանետումների համար պետք է տեղադրվեն անընդհատ արտանետումների մոնիթորինգի (CEM) համակարգեր:

Համակարգը պետք է հնարավորություն ընձեռի Երևանի քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանմանը հեռակա մուտք գործել՝ կատարողականի և ընթացիկ վերահսկողության ապահովման նպատակով:

Առողջություն, անվտանգություն և աշխատանքի պաշտպանություն

Գործարանի նախագծում պետք է ներառված լինեն միջազգային լավագույն փորձին և ազգային օրենսդրությանը համապատասխան հետևյալ համակարգերն ու միջոցառումները.

- Աշխատանքի առողջության և անվտանգության միջոցառումներ;
- Հակահրդեհային համակարգ;
- Փոշու նստեցում, օդափոխություն և աղմուկի վերահսկում;
- Անվտանգ աշխատանքային գոտիներ, ցուցանակներ և արտակարգ իրավիճակներին արձագանքման պլաններ:

Փաստաթղթավորում, մասնագետների ուսուցում և գործարանի հանձնում

Ծրագիրն իրականացնող Կազմակերպությունը պետք է տրամադրի.

- Մանրամասն նախագծային փաստաթղթեր, ներառյալ գործընթացի դիագրամները (PFD), խողովակաշարերի և գործիքավորման դիագրամները (P&ID) և սարքավորումների տեխնիկական բնութագրերը:
- Շահագործման և սպասարկման (O&M) ձեռնարկներ:
- Երևանի քաղաքապետարանի՝ շահագործման գործընթացում ներգրավված անձնակազմի համար նախատեսված ուսումնական ծրագիր, որը ներառում է Գործարանի շահագործումը, անվտանգությունը և սպասարկումը:

- Գործարկման և կատարողականի փորձարկման արձանագրություններ:

Երաշխիք և ետերաշխիքային սպասարկում

Գործարանի բոլոր սարքավորումները շահագործման ժամկետի ավարտից հետո պետք է լինեն առնվազն 5 տարվա երաշխիքային ժամկետով:

Հաղթող մասնակիցը շահագործման ժամկետի ավարտից հետո պետք է ապահովի հետվաճառքի սպասարկում և պահեստամասերի առկայություն առնվազն 5 տարվա կտրվածքով:

Գործարանի կառուցման համար հողհատկացում

Նախատեսված է, որ Գործարանը կկառուցվի ներկայիս՝ Նուբարաշենի աղբավայրի հարևանությամբ: Հարակից տարածքում նախատեսվում է նաև սանիտարական նոր աղբավայրի կառուցում:

Գործարանի համար հատկացված մակերեսը կազմում է 5 հա:

Հողամասը Ներդրողին տրամադրվելու է կառուցապատման իրավունքով՝ 23 տարի ժամկետով:



ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված N 9
Երևանի քաղաքապետի
2025թ. դեկտեմբերի 23 -ի
հ._____5249 -Ա որոշման

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԽԱՌԸ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՆԵՐԴՐՈՂԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԲԱՑ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՆՁԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

ք. Երևան « » ——— 2025 թ.

Երևան համայնքը (այսուհետ՝ Համայնք), ի դեմս Երևանի քաղաքապետ՝ _____ (նստավայրը՝ ՀՀ, ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), մի կողմից, և «_____», ի դեմս՝ _____, որը գործում է _____հիման վրա (հասցե՝_____) (այսուհետ՝ Ներդրող), մյուս կողմից, (այսուհետ միասին՝ Կողմեր)՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ներդրողը հաղթող է ճանաչվել Երևանի քաղաքապետի _____ թվականի _____ թիվ _____ Ա որոշմամբ հայտարարված Երևան քաղաքում խառը կենցաղային թափոնների վերամշակման գործարանի կառուցման և շահագործման ներդրողի ընտրության բաց հրապարակային մրցույթում, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն Պայմանագրով Ներդրողը պարտավորվում է իր սեփական միջոցների ներդրմամբ իրագործել Երևանի քաղաքապետի _____ թվականի _____ թիվ _____ Ա որոշմամբ հայտարարված Երևան քաղաքում խառը կենցաղային թափոնների վերամշակման գործարանի կառուցման և շահագործման ներդրողի ընտրության բաց հրապարակային երկփուլ մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) պայմաններով նշված Երևան քաղաքում խառը կենցաղային թափոնների վերամշակման գործարանի կառուցման և շահագործման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), այն է՝ կառուցել և շահագործել Երևան քաղաքում խառը կենցաղային թափոնների վերամշակման գործարան՝ համաձայն Մրցույթում Ներդրողի կողմից ներկայացված և Մրցույթի հանձնաժողովի կողմից վերջինիս որպես հաղթող ճանաչելու համար հիմք հանդիսացած և Մրցույթի հանձնաժողովի կողմից արձանագրված պայմանների, Մրցույթի տեխնիկական պահանջների և սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ժամանակացույցի:

1.2. Սույն Պայմանագրի 1.1-ին կետում նշված Ծրագրի իրագործման նպատակով Համայնքը պարտավորվում է Ներդրողին 23 տարի ժամկետով կառուցապատման իրավունքով տրամադրել ք. Երևան, Նուբարաշենի խճուղի 30/2 հասցեում գտնվող 50.000 քմ մակերեսով հողամասը՝ համաձայն N 2 հավելվածով ներկայացված սխեմայի:

1.3. Կողմերը ընդունում են, որ Ներդրողը Ծրագրի իրագործման շրջանակներում պարտավորվում է ապահովել շուրջ ___ (____) ____ _____ դրամի չափով ներդրում:

1.4. Կողմերը ընդունում են, որ մինչև սույն Պայմանագրի 1.3-րդ կետում նշված անկախ գնահատողի կողմից կատարված գնահատմամբ հաշվարկված ներդրման վերջնական չափի որոշումը, Ներդրողի կողմից սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում որպես տուժանքի (տուգանք, տույժ) հաշվարկման հիմք ընդունվում է Կողմերի միջև համաձայնեցված և սույն Պայմանագրի 1.3-րդ կետում նշված ներդրման չափը, իսկ անկախ գնահատողի կողմից կատարված գնահատմամբ հաշվարկված ներդրման վերջնական չափի որոշումից հետո՝ անկախ գնահատողի կողմից որոշված ներդրման չափը:

1.5. Կողմերը ընդունում են, որ Համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասում կառուցապատման իրավունքով կառուցված կամ ստեղծված շենքերը և շինությունները հողամասի սեփականատիրոջ սեփականությունն են և կառուցապատման իրավունքի գործողության ժամկետի ավարտից հետո 10 օրվա ընթացքում Ներդրողը պարտավորվում է Գործարանի շահագործման համար նախատեսված և իր սեփական միջոցների հաշվին տեղադրված բոլոր սարքերը, սարքավորումները և այլ շարժական գույքը, այդ թվում՝ պահեստամասերը, անհատույց հանձնել համայնքին՝ որպես սեփականություն: Սույն կետում նախատեսված խոստումը համարվում է նվիրատվության խոստում:

1.6. Կողմերը ընդունում են, որ Կառուցապատման ժամկետի ավարտից հետո Ներդրողի կատարած անբաժանելի և բաժանելի բարելավումները համայնքի սեփականությունն են և չեն հատուցվում:

1.7. Կողմերը ընդունում են, որ սույն պայմանագրի իմաստով պայմանագրի չկատարում է համարվում Համայնքի կողմից տեղափոխված աղբը չընդունելն ավելի քան մեկ շաբաթ, կամ Համայնքի կողմից տեղափոխված աղբի՝ հաստատված տեխնոլոգիայից տարբերվող եղանակով ոչնչացումը կամ սույն Պայմանագրի 2.1-ին կետով սահմանված պարտավորությունների չիրականացումը կամ սույն Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված ժամկետներից 30%-ից ավել շեղումները:

1.8. Կողմերը ընդունում են, որ սույն Պայմանագրի իմաստով պայմանագրի ոչ պատշաճ կատարում է համարվում Պայմանագրով սահմանված պարտավորություններից շեղումը, որը չի հանգեցրել գործունեության կասեցման, սակայն հանգեցրել է արտանետումների, արտահոսքերի կամ հոտի տարածման՝

օրենսդրությամբ սահմանված թույլատրելի նորմերի խախտմամբ, և որը դրանց հայտնաբերումից հետո մեկշաբաթյա ժամկետում չի վերացվել:

1.9. Կողմերը ընդունում են, որ սույն պայմանագրի իմաստով Գործարանի շահագործման հանձնել է համարվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված քաղաքաշինական փաստաթղթերի (ավարտական ակտ և շահագործման թույլտվություն) առկայությամբ գործարանի գործարկումը՝ սույն Պայմանագրի N 3 հավելվածով ամրագրված տեխնոլոգիայի կիրառմամբ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. **Ներդրողը պարտավորվում է՝**

2.1.1. Կատարել սույն Պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները՝ պայմանագրով նախատեսված պայմաններով և ժամկետներում:

2.1.2. Սույն Պայմանագրի 1.1-ին կետում նշված գործարանի նախագծումը, կառուցումը, տեղադրումը և շահագործումը իրականացնել Մրցույթում Ներդրողի կողմից ներկայացված և Մրցույթի հանձնաժողովի կողմից վերջինիս որպես հաղթող ճանաչելու համար հիմք հանդիսացած և Մրցույթի հանձնաժողովի կողմից արձանագրված պայմաններին, Մրցույթի տեխնիկական պահանջներին և սույն Պայմանագրին համապատասխան:

2.1.3. Ընդունել համայնքի կողմից տեղափոխվող չտեսակավորված աղբը:

2.1.4. Համայնքին տրամադրել գործարանի կառուցման նախագծային փաստաթղթերը, ներառյալ գործընթացի դիագրամները (PFD), խողովակաշարերի և գործիքավորման դիագրամները (P&ID), սարքավորումների տեխնիկական բնութագրերը, շահագործման և սպասարկման (O&M) ձեռնարկները, Երևանի քաղաքապետարանի՝ շահագործման գործընթացում ներգրավված անձնակազմի համար նախատեսված ուսումնական ծրագիրը, որը ներառում է գործարանի շահագործումը, անվտանգությունը և սպասարկումը, գործարկման և կատարողականի փորձարկման արձանագրությունները:

2.1.5. Ապահովել գործարանի տարածքում Մրցույթի տեխնիկական պահանջներին համապատասխան անհրաժեշտ սարքերի, սարքավորումների, համակարգերի և այլ գույքի առկայությունը:

2.1.6. Ապահովել Երևանի քաղաքապետարանիհամապատասխան ստորաբաժանումների կամ ներկայացուցիչների հեռակա մուտք գործելու հնարավորությունը տեղադրված համակարգերին՝ կատարողականի և ընթացիկ վերահսկողության ապահովման նպատակով:

2.1.7. Ապահովել Համայնքի լիազոր ներկայացուցչի անարգել մուտքը և ներկայությունը Գործարանի կառուցման և (կամ) շահագործման աշխատանքների

իրականացման ընթացքում՝ ամբողջ կամ ցանկացած ժամանակահատվածում՝ Ներդրողի հետ նախապես համաձայնեցված կարգով:

2.1.8. Սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման անհնարինության և/կամ այդ պարտավորությունների կատարման հնարավոր ուշացումների մասին սույն Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ժամանակացույցով տվյալ պարտավորության համար սահմանված ժամկետից առնվազն 5 (հինգ) օր առաջ գրավոր տեղեկացնել Համայնքին:

2.1.9. Առավելագույնը մեկշաբաթյա ժամկետում վերացնել իր պարտավորությունների ոչ պատշաճ կամ ուշացումով կատարման հետևանքները:

2.1.10. Սույն Պայմանագրի 1.1-ին կետում նշված Ծրագիրը չիրականացնելու կամ ոչ պատշաճ իրականացնելու դեպքում Համայնքին վճարել տուժանք (տուգանք, տույժ)՝ Պայմանագրի 4.2-րդ և 4.3-րդ կետերով սահմանված չափերով:

2.1.11. Կառուցապատման իրավունքի գործողության ժամկետի ավարտից հետո 10 օրվա ընթացքում Գործարանի շահագործման համար նախատեսված և իր սեփական միջոցների հաշվին տեղադրված բոլոր սարքերը, սարքավորումները և այլ գույքը, այդ թվում՝ պահեստամասերը, անհատույց հանձնել համայնքին՝ որպես սեփականություն:

2.1.12. Գործարանի շահագործման ժամկետի ավարտից հետո 5 տարվա ընթացքում ապահովել գործարանի շահագործման համար անհրաժեշտ պահեստամասերի առկայությունը և գործարանում տեղադրված և համայնքի սեփականությանը հանձնված սարքերի, սարքավորումների և այլ գույքի սպասարկումը իր միջոցների հաշվին:

2.1.13. Ընկերության կառավարման մարմինների կազմում ներառել Երևանի քաղաքապետարանի կողմից առաջարկված առնվազն մեկ թեկնածու:

2.1.14. Գործարանի կառուցման և շահագործման աշխատանքներում ներգրավվել տեղական աշխատուժ՝ ընդհանուր անձնակազմի առնվազն 30%-ի համամասնությամբ:

2.1.15. Ընդունված և վերամշակված աղբի ծավալների, տեսակավորված և օգտահանված թափոնների, ֆինանսական հոսքերի, արտանետումների և գործունեության այլ ուղղությունների վերաբերյալ Երևանի քաղաքապետարանին ներկայացնել կիսամյակային հաշվետվություններ՝ մինչև հաջորդ ամսվա 10-ը:

2.1.16. Սույն Պայմանագրի 4.2-րդ կետով նախատեսված տուգանքի ապահովման նպատակով ներկայացնել բանկային երաշխիք՝ սույն պայմանագրի կնքումից առնվազն 10 աշխատանքային օր առաջ, կամ նույն չափով գումարը փոխանցել Երևանի քաղաքապետարանի դեպոզիտ հաշվին:

2.2. Համայնքը պարտավորվում է՝

2.2.1. Ներդրողին կառուցապատման իրավունքով տրամադրել ք. Երևան, Նուբարաշենի խճուղի 30/2 հասցեում գտնվող 50,000 քմ մակերեսով հողամասը՝ 23 տարի ժամկետով:

2.2.2. Իր լիազորությունների շրջանակներում օժանդակել ներդրողի կողմից Ծրագրով նախատեսված աշխատանքների կատարմանը:

2.2.3. Ապահովել խառը կենցաղային թափոնների տեղափոխումը գործարան՝, օրական նվազագույնը՝ 800 տոննա։

2.2.4. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանը ստանալու թույլտվություն՝ սույն Պայմանագրով նախատեսված հողամասը առանց մրցույթի՝ կառուցապատման իրավունքով Ներդրողին տրամադրելու նպատակով:

2.2.5. Սույն Պայմանագրի 2.2.4-րդ կետում նշված Կառավարության որոշումը ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում կնքել հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին պայմանագիր:

2.3. Ներդրողն իրավունք ունի՝

2.3.1. Ծրագրի իրականացման ընթացքում Համայնքից ստանալ օժանդակություն՝ վերջինիս լիազորությունների շրջանակներում:

2.3.2. Համայնքից պահանջելու ապահովելու խառը կենցաղային թափոնների տեղափոխումը գործարան:

2.3.3 Գործարանի կառուցման համար պայմանագրով սահմանված ժամկետը կասեցնել հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին պայմանագրով սահմանված դեպքերում:

2.3.4. Այլ համայնքներից իրականացնելաղբի ընդունում, նախապես գրավոր եղանակով համաձայնեցնելով Համայնքի հետ:

2.4. Համայնքն իրավունք ունի՝

2.4.1. Ներդրողից պահանջելու սույն Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում կատարելու Պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

2.4.2. Պահանջելու և ստանալու գործարանի կառուցման նախագծային փաստաթղթերը, ներառյալ գործընթացի դիագրամները (PFD), խողովակաշարերի և գործիքավորման դիագրամները (P&ID), սարքավորումների տեխնիկական բնութագրերը, շահագործման և սպասարկման (O&M) ձեռնարկները, Երևանի քաղաքապետարանի՝ շահագործման գործընթացում ներգրավված անձնակազմի համար նախատեսված ուսումնական ծրագիրը, որը ներառում է գործարանի շահագործումը, անվտանգությունը և սպասարկումը, գործարկման և կատարողականի փորձարկման արձանագրությունները:

2.4.3. Պահանջելու Ներդրողից սույն Պայմանագրով սահմանված ժամկետում վերացնելու իր պարտավորությունների ոչ պատշաճ կամ ուշացումով կատարման հետևանքները:

2.4.4. Պահանջելու Ներդրողից Ծրագիրը չիրականացնելու կամ ոչ պատշաճ իրականացնելու դեպքում Համայնքին վճարել տուժանք (տուգանք, տույժ)՝ Պայմանագրով սահմանված չափով:

2.4.5. Ներդրողից պահանջելու Կառուցապատման իրավունքի գործողության ժամկետի ավարտից հետո 10 օրվա ընթացքում Գործարանի շահագործման համար նախատեսված և Ներդրողի կողմից իր սեփական միջոցների հաշվին տեղադրված բոլոր սարքերը, սարքավորումները և այլ գույքը, այդ թվում՝ պահեստամասերը, անհատույց հանձնել համայնքին՝ որպես սեփականություն:

2.4.6. Ներդրողից պահանջելու գործարանի շահագործման ժամկետի ավարտից հետո 5 տարվա ընթացքում ապահովել գործարանի շահագործման համար անհրաժեշտ պահեստամասերի առկայությունը և գործարանում տեղադրված և համայնքի սեփականությանը հանձնված սարքերի, սարքավորումների և այլ գույքի սպասարկումը իր միջոցների հաշվին:

2.4.7. Համայնքի լիազոր ներկայացուցիչը իրավունք ունի Ներդրողի հետ նախապես համաձայնեցված կարգով ներկա լինելու Գործարանի կառուցման և (կամ) շահագործման աշխատանքների իրականացման ընթացքին՝ ամբողջ կամ ցանկացած ժամանակահատվածում՝ չխոչընդոտելով Ներդրողի կողմից իր պարտավորությունների կատարմանը:

2.4.8. Ստանալ տեղադրված համակարգերին հեռակա մուտք գործելու անարգել հնարավորություն՝ կատարողականի և ընթացիկ վերահսկողության ապահովման նպատակով:

2.4.9. Ներդրողի կողմից սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման դեպքում միակողմանիորեն լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես՝ առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Ներդրողին:

2.4.10 Ներդրողի կողմից սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու դեպքում կիրառել սույն Պայմանագրի 4.3-րդ կետով սահմանված տույժերը:

2.4.11. Մինչև սույն պայմանագրի կնքումը սույն Պայմանագրի 4.2-րդ կետով նախատեսված տուգանքի ապահովման նպատակով ներկայացնել բանկային երաշխիք՝ սույն պայմանագրի կնքումից առնվազն 10 աշխատանքային օր առաջ, կամ նույն չափով գումարը փոխանցել Երևանի քաղաքապետարանի դեպոզիտ հաշվին: :

2.4.12. Սույն պայմանագրի 2.4.11-րդ կետով սահմանված երաշխիքը Ներդրողի կողմից չներկայացնելու դեպքում հրաժարվել կնքելու սույն պայմանագիրը:

3. ԿՈՂՄԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Ներդրողը երաշխավորում է, որ գործարանի շահագործման համար անհրաժեշտ սարքերը, սարքավորումները և այլ գույքերը ունենալու են արտադրողի կողմից տրված վկայականներ կամ այլ փաստաթղթեր, որոնք հավաստելու են դրանց որակի համապատասխանությունը Մրցույթի տեխնիկական պահանջներին:

3.2. Ներդրողը ապահովում է գործարանի շահագործման համար անհրաժեշտ սարքերը, սարքավորումները և այլ գույքերը սույն պայմանագրով սահմանված

կարգով համայնքի սեփականությանը հանձնելուց հետո հինգ տարվա սպասարկում և պահեստամասերի առկայություն:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Կողմերը պատասխանատվություն են կրում իրենց պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար՝ համաձայն գործող օրենսդրության և սույն Պայմանագրի պայմանների:

4.2. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված Ծրագիրը չիրականացնելու կամ ոչ պատշաճ իրականացնելու դեպքում Համայնքն իրավունք ունի Ներդրողից պահանջելու տուգանքի վճարում՝ սույն Պայմանագրի 1.3-րդ կետով սահմանված Ներդրման գումարի 2 %-ի չափով

4.3.Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված Ծրագիրը ոչ պատշաճ իրականացնելու դեպքում սահմանել տույժ կետանցի յուրաքանչյուր օրվա համար Ներդրման գումարի 0,01 %-ի չափով:

4.4. Համայնքը չի կրում որևէ պատասխանատվություն Ներդրողի կողմից գործարանի կառուցման և շահագործման ընթացքում առաջացած որևէ վնասի, իրավախախտման, երրորդ անձանց պահանջների կամ այլ հետևանքների համար, և Ներդրողը պարտավորվում է նման դեպքերում ամբողջությամբ ստանձնել պատասխանատվությունը՝ օրենքով սահմանված կարգով:

4.5. Համայնքը չի կրում որևէ պատասխանատվություն Ներդրողի կողմից իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով Համայնքի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու հետևանքով Ներդրողի համար առաջացած վնասների համար:

5. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Կողմերի միջև բոլոր ծանուցագրերը, հարցումները, ծանուցումները և (կամ) հաստատումներն ուղարկվում են գրավոր կամ էլեկտրոնային եղանակով, պատշաճ կերպով և ստորագրվում են համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցչի կամ մարմնի կողմից և (կամ) առաքվում Պայմանագրում նշված հասցեներով: Պայմանագրի շրջանակում սույն կետում նշված ծանուցում/ներ/ը, ցանկացած ցուցում, տեղեկատվություն Կողմերը միմյանց միջև կարող են փոխանակվել նաև էլեկտրոնային փոստով՝ համապատասխանաբար Համայնքի՝_____, և Ներդրողի _____ էլեկտրոնային հասցեների միջև հաղորդագրությունների փոխանակման միջոցով, որն ուղարկելու հաջորդ օրը համարվում է պատշաճ ծանուցված:

5.2. Կողմերի հասցեների, հեռախոսահամարների, հետադարձ կապի, էլեկտրոնային փոստի հասցեների, կամ այլ տվյալների փոփոխության պարագայում համապատասխան Կողմը պարտավոր է գրավոր կերպով տեղեկացնել մյուս Կողմին փոփոխության մասին մեկշաբաթյա ժամկետում: Պատասխանատու Կողմը կրում է

սույն կետում նշված պարտավորության չկատարման արդյունքում առաջացող բացասական հետևանքները:

5.3. Ցանկացած Կողմի իրավահաջորդը պետք է ուղղակիորեն ստանձնի Պայմանագրից բխող իրավունքներն ու պարտավորությունները, այդ թվում այն իրավունքներն ու պարտավորությունները, որոնք կապված են հնարավոր վեճերի և (կամ) տարաձայնությունների կարգավորման հետ:

6. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

6.1. Եթե Կողմը սույն Պայմանագրով սահմանված պարտականությունների կատարման ուժով մյուս Կողմից ստացել է նոր լուծումների և տեխնիկական գիտելիքների վերաբերյալ տեղեկություններ կամ Բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ կամ Անձնական տվյալներ, այդ թվում օրենսդրորեն չպաշտպանված տեղեկություններ, ինչպես նաև տեղեկություններ, որոնք կարող են համարվել առևտրային գաղտնիք, ապա Կողմը, որը ստացել է նշված տեղեկությունները, առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության իրավունք չունի այն հրապարակել, բացահայտել կամ այլ կերպ տրամադրել կամ հաղորդել երրորդ անձանց՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

6.2. Սույն կետով սահմանված պարտավորությունները կշարունակեն ուժի մեջ մնալ սույն Պայմանագրի ժամկետի ավարտից կամ լուծումից (անկախ պատճառից) հետո և առանց սահմանափակումների շարունակելու են գործել անորոշ ժամկետով:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

7.1. Կողմերն ազատվում են պատասխանատվությունից սույն Պայմանագրով սահմանված իրենց պարտականությունները մասնակիորեն կամ ամբողջությամբ չկատարելու համար, եթե այն տեղի է ունեցել անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով: Անհաղթահարելի ուժի ազդեցության հանգամանքներ են ռազմական գործողությունները, գործադուլը, քաղաքացիական անկարգությունները, տարերային աղետները, էլեկտրաէներգիայի անջատումները կամ ուշացումները, համավարակները, որևէ պետական մարմնի կողմից ընդունված իրավական ակտերը, և այլն, որոնք անմիջականորեն ազդել են սույն Պայմանագրի կատարման վրա, և որոնք ծագել են Պայմանագիրը կնքելուց հետո, և որոնք Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

7.2. Այն Կողմը, որի պարտականությունների կատարումը ընդհատվում է Պայմանագրի կետում նշված պատճառներով, պարտավոր է գրավոր ձևով 5 (հինգ) օրվա ընթացքում ծանուցել մյուս Կողմին պարտականությունների ընդհատման կամ չկատարելու և դրա պատճառների մասին:

7.3. Եթե անհաղթահարելի ուժի հանգամանքները կամ դրանց հետևանքները տևում են 1 (մեկ) ամսից ավելի՝ Կողմերը 10 օրվա ժամկետում պետք է քննարկեն, թե

ինչ միջոցներ պետք է ձեռնարկել Ծրագիրն իրականացնելու կամ այն շարունակելու համար:

7.4. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես գրավոր կերպով տեղյակ պահելով մյուս Կողմին:

8. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Պայմանագրի կապակցությամբ կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ բանակցությունների արդյունքում համաձայնություն չգալու դեպքում՝ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.2. Պայմանագրի գործողության վերաբերյալ դատական վեճի դեպքում Կողմերը պարտավորվում են շարունակել կատարել Պայմանագրից ծագած իրավահարաբերությունները մինչև վեճի վերաբերյալ վերջնական դատական ակտի կայացումը:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Պայմանագիրը կազմվել է և կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով: Պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

9.2. Պայմանագիրը և դրան կից Հավելվածները հանդիսանում են դրա առարկայի շուրջ Կողմերի ամբողջական համաձայնություն:

9.3. Եթե Պայմանագրի որևէ դրույթ ճանաչվում է անվավեր կամ դառնում է անկիրարկելի, ապա այն պետք է վերանայվի կիրառելի օրենքների սահմաններում՝ Կողմերի մտադրությունը վերականգնելու նպատակով, և այդպիսի անվավերությունը կամ անկիրարկելիությունը չի ազդում Պայմանագրի որևէ այլ դրույթի վավերականության կամ կիրարկելիության վրա: Կողմերը չեն շահարկի Պայմանագրի որևէ դրույթի անգործադրելիությունը՝ Պայմանագրով սահմանված իրենց պարտավորություններից խուսափելու համար:

9.4. Սույն Պայմանագրին կից Հավելվածները հանդիսանում են սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

9.5. Պայմանագրի բոլոր լրացումները և փոփոխությունները կատարվում են միայն Կողմերի գրավոր համաձայնությամբ առանձին փաստաթուղթ կազմելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

9.6. Պայմանագրում չեն կարող կատարվել այնպիսի լրացումներ և փոփոխություններ, որոնք կհանգեցնեն Մրցույթի պայմանների փոփոխությանը կամ կհակասեն դրանց կամ Մրցույթում Ներդրողի կողմից ներկայացված և Մրցույթի հանձնաժողովի կողմից վերջինիս որպես հաղթող ճանաչելու համար հիմք հանդիսացած և Մրցույթի հանձնաժողովի կողմից արձանագրված պայմաններին:

9.7. Սույն պայմանագրի ստորագրմամբ Կողմերը հաստատում և (կամ) հավաստում են, որ Պայմանագրի կնքման պահին իրենց հայտնի չեն այնպիսի հանգամանքներ, որոնց հետևանքով իրենք իրավասու կամ ի վիճակի չեն կնքել կամ կատարել Պայմանագիրը, ինչպես նաև Պայմանագրի կնքումը և կատարումը լիովին համապատասխանում են իրենց շահերին:

9.8. Պայմանագրի 1.2-րդ կետում նշված հողամասի նկատմամբ ներդրողի կառուցապատման իրավունքի գրանցման հետ միաժամանակ գրանցվում են սույն պայմանագրի 1.1-ին կետով սահմանված պայմանագրային պարտավորությունները, որպես սահմանափակումներ, որոնք նույն ծավալով և պայմաններով փոխանցելի են հողամասի կամ դրա որևէ մասի հետագա սեփականատերերին՝ Հողամասի կամավոր կամ հարկադիր որևէ կերպ օտարման (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում ներդրման) դեպքում:

9.9. Սույն Պայմանագրի որևէ հիմքով լուծումը կամ դադարումը հիմք է Համայնքի կողմից կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի լուծման և դադարման համար:

9.10 Պայմանագիրն իրավական ուժ է ստանում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարումը:

9.11. Պայմանագիրը կազմված է երկու հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակներից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

<u>Ծրագրի մեկնարկի ժամկետ.</u>

Ծրագրի մեկնարկը՝ նախագծի հաստատման և բոլոր փորձաքննությունների ստացման տեսքով կկազմակերպվի _____ ամսում:

<u>Գործարանի շահագործման մեկնարկի ժամկետ.</u>

Հաստատված նախագծով շինարարության ավարտը և շահագործման մեկնարկը կկազմակերպվի _____ամսում:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գործողություն	Ամիս																		
Նախագծի մշակում																			
Փորձաքննություններ																			
Նախագծի հաստատում																			
Թույլտվությունների ստացում																			
Շինարարություն																			
Ավարտական ակտի և շահագործման թույլտվության ստացում																			
Շահագործման մեկնարկ																			

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Ծրագրի իրագործման նպատակով կառուցապատման իրավունքով տրամադրվող 50.000 քմ մակերեսով հողամաս.

Երևան, Նուբարաշենի խճուղի 30/2 հասցեում գտնվող



ՀԱՎԵԼՎԱԾ 3
Աղբի վերամշակման հաստատված տեխնոլոգիայի նկարագրություն

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ